Երկրորդ ընթերցում
Նախագիծ

*Կ-142[1]-09.11.2012-ԳԿ-010/2*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

## «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի՝

1. 2-րդ կետի 2.7 և 2.7[1] ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

2. 8-րդ կետի՝

1) 8.5.2-րդ ենթակետից հանել <<,բացառությամբ բժշկական միջին մասնագիտական ծրագրերի>> բառերը.

2) 8.5.3-րդ և 8.5.5-րդ ենթակետերից հանել <<, բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի,>> բառերը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2013 թվականի փետրվարի 6-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ արված դիտողությունների և առաջարկությունների մասին**

| Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունները |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ.Բաբաուխանյան | ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի փետրվարի 6-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.<br>Օրենքի նախագիծը լրացնել նոր 1.1 և 1.2 հոդվածներով.<br>Հոդված 1.1 Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ կետով՝ <<6.Համապատասխան բնագավառում պետական քաղաքականության | Ընդունելի չեն: | *Օրենսդրական նախաձեռնությունը պայմանավորված է կրթության ոլորտի ներկա բարեփոխումներով,* բխում է կրթական ոլորտում միասնական պետական քաղաքականություն, կրթության բնագավառում պետական քաղաքականության միասնական չափանիշներ ունենալու, ուսումնական հաստատությունների համար լիցենզավորման պայմանների ու պահանջների հավասար դաշտ ապահովելու անհրաժեշտությունից:<br><<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում (այսուհետ՝ օրենք) առաջարկվող լրացումների անհրաժեշտությունը չկա. Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված լիցենզավորման նպատակների վերլուծությունից պարզ է դառնում, որ այն պետական հսկողության ձև է, համապատասխան բնագավառում պետական քաղաքականության իրականացման եղանակ: |

| | | | |
|---|---|---|---|
| | իրականացումը:>>:<br>Հոդված 1.2. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետը լրացնել նոր՝ 3-րդ մասով. <<Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք չունեն կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, կրոնական կազմակերպությունները կամ նրանց մասնակցությամբ հիմնադրված այլ իրավաբանական անձերը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:>> : | | Գործունեության առանձին տեսակների լիցենզավորումը գործարարական գործունեության կառավարման և դրա նկատմամբ վերահսկողություն իրականացնելու եղանակ է, տնտեսվարող սուբյեկտների գործունեության նկատմամբ պետական կառավարման ֆունկցիա:<br><br>ՀՀ-ում լիցենզավորման հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, օրենքով, ՀՀ միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:<br>ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասության պահանջը տարածվում է բոլոր իրավաբանական անձանց նկատմամբ: Օրենքի 7-րդ հոդվածում առաջարկվող լրացումը չի բխում նաև ՀՀ Սահմանադրության 7-րդ, 8.1. հոդվածներից: |